ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2016
02.2016
03.2016
04.2016
05.2016
06.2016
Հունիս
07.2016
08.2016
09.2016
10.2016
11.2016
12.2016

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 23-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2016

Հունիս

թիվ 6 (214)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-76-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Հոթ Կրեդիտ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու, «Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Ստեփանավան» ներկայացուցչությունը գրանցումից հանելու, ինչպես նաև «Յունիբանկ» ԲԲԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի որոշ մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները ՀՀ-ում «ՐԻԵՏՈՒՄՈՒ ԲԱՆԿ» ԲԸ-ի ներկայացուցչության գործունեության դադարեցումը թույլատրելու, ինչպես նաև 4 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 4 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 107Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 79-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 80-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

21 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 81-Ն որոշումը «Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 84-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հուլիսի 13-ի թիվ 175-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

23 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի 81-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերում «2017 թվականի» բառերը փոխարինել «2018 թվականի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
3 հունիսի 2016 թ., Երևան, ՀՕ-76-Ն

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի մայիսի 12-ին (ՀՀՊՏ N 44 (1218), 18.05.16):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Հոթ Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 106Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Քարդ ԱգրոԿրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Ստեփանավան» ներկայացուցչությունը (որոշում թիվ 1/398Ա):
- ***Գրանցվել են*** «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության՝ «Պարույր Սևակ», և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/405Ա, 1/410Ա):
- ***Թույլ է տրվել*** Հայաստանի Հանրապետությունում «ՐԻԵՏՈՒՄՈՒ ԲԱՆԿԱ» ԲԸ-ի ներկայացուցչության գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/459Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1370000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/376Ա, 1/377Ա, 1/385Ա, 1/387Ա) և 4 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/416Ա-1/418Ա, 1/442Ա):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 107Ա որոշմամբ 2016 թ. հունիսի 28-ին ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 7.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 9.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 6.0%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով խթանել դրամային հիփոթեքային վարկերի տրամադրումը և երկարաժամկետ միջոցների ներգրավումը, զսպել արտարժութային հիփոթեքային վարկերի տրամադրումը ու նվազեցնել դոլարայնացման մակարդակը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժթ» կետը, 36-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 49-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, սույն կետով սահմանված պահանջները և դրանց ապահովվածությունները պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ պայմանները.

ա. ցանկացած արժույթով արտահայտված պահանջի ապահովվածությունը պետք է արտահայտված լինի Հայաստանի Հանրապետության դրամով, առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով, բանկային ոսկով և (կամ) ռուբլով, իսկ երկրորդ խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով արտահայտված պահանջի ապահովվածությունը, բացի սույն ենթակետով սահմանված արժույթներից, կարող է նաև արտահայտված լինել տվյալ պահանջին համապատասխան արժույթով, և

բ. պահանջների՝ մինչև մարումն ընկած ժամկետները չպետք է գերազանցեն ապահովվածություն հանդիսացող արժեթղթերի, տվյալ բանկում ներդրված ավանդների՝ մինչև մարումն ընկած ժամկետները, տվյալ բանկին տրամադրված վարկերից կամ փոխառություններից բխող պահանջի իրավունքի իրականացման ժամկետները, ինչպես նաև երաշխիքների կամ երաշխավորությունների տրամադրման ժամկետները, և

գ. փոխառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի առարկայի փաստացի իրացման հնարավորության կամ բանկին տրամադրված երաշխիքի/երաշխավորության կատարման ժամկետների առումով չպետք է լինեն պայմանագրով և/կամ այլ փոխադարձ համաձայնությամբ նախատեսված սահմանափակումներ:»,

2) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ում՝

ա. աղյուսակ 1-ի 6.22-րդ կետի առաջին և երկրորդ սյունակների «50» թվերը փոխարինել «35» թվերով,

բ. աղյուսակ 1-ում լրացնել 6.22.1-րդ և 6.22.2-րդ կետերը՝ հետևյալ բովանդակությամբ.

«

6.22.1. Ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկեր, որոնք չեն համապատասխանում սույն հավելվածի 6.22-րդ կետով սահմանված պահանջներին, սակայն որոնց գծով բավարարված են ներքոհիշյալ պայմանները միաժամանակ. ա. հիփոթեքային վարկ(եր) ստացած փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պահանջների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների հանրագումարը (բացառությամբ՝ սույն հավելվածի 6.22-րդ կետը բավարարող հիփոթեքային վարկերի) չի գերազանցում 35 մլն ՀՀ դրամը և բ. հիփոթեքային վարկ(եր) ստացած փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ սույն կետի «ա» ենթակետը բավարարող պահանջների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների հանրագումարը (բացառությամբ՝ սույն հավելվածի 6.22-րդ կետը բավարարող հիփոթեքային վարկերի) չի գերազանցում «ա» ենթակետով սահմանված մեծությունների հանրագումարի 0.3%-ը:	75	150
6.22.2. Ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկեր, որոնք չեն համապատասխանում 6.22-րդ և 6.22.1-րդ կետերով սահմանված պահանջներին:	100	200

»,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մայիսի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.06.2016 թ. (ՀՀԳՏ N13 (556), 15.06.2016):

գ. լրացնել 7.1.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «7.1.1. Սույն հավելվածի 6.22.1-րդ և 6.24-րդ կետերի իմաստով՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց շրջանակը, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերություններում նշված ընտանիքի անդամների շրջանակը կարող է սահմանափակվել ֆիզիկական անձի հետ համատեղ տնտեսություն վարող հետևյալ անձանցով. ծնողներ, ամուսին և երեխաներ:»,

3) Կանոնակարգ 2-ի հավելված 6-ում՝

ա. 1-ին կետում «կամ վերանորոգման» բառերը փոխարինել «, վերանորոգման կամ կառուցման» բառերով,

բ. 3-րդ կետում «իրավունք» բառից հետո լրացնել «, և առկա է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող իրավունքի պետական գրանցման վկայականը» բառերը,

գ. լրացնել 10-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Սույն հավելվածի 3-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ կետերի իմաստով՝ գույքի կառուցման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկի, ինչպես նաև կառուցվող բազմաբնակարան շենքից գույքի ձեռքբերման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկի տրամադրման պահ է համարվում «35/75 տոկոս» ռիսկի կշիռների կիրառման սկզբնական պահը:»,

դ. «50» թիվը փոխարինել «35» թվով,

4) Կանոնակարգ 2-ի հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերում ««էյ-Սի-Թի-Այ-էյ-էմ»-ից (ACTIAM)» բառերից հետո լրացնել «, «Դուալ Ռիթըռն Ֆանդ էս.Այ.Սի.էյ.Վի»-ից (Dual Return Fund S.I.C.A.V.), «Ֆայնետիք էս.Սի.էյ. ՍԻՔԱՎ-ՍԻՖ, Սաբ-Ֆանդ-Ֆայնետիք – Մայքրոֆայնենս»-ից (Finethic S.C.A., SICAV-SIF, Sub-Fund – Finethic-Microfinance), «Սիմբիոտիքս Սիքավ (Լյուքս.)»-ից (Symbiotics Sicav (Lux.)), «ԻԷմԷֆ Մայքրոֆայնենս Ֆանդ էյՋիԷմՎիՔէյ»-ից (EMF Microfinance Fund AGmvK), «Քեփիթալ Ջեսշըն (Capital Gestion)»-ից, «Դը Սմոլ էնթեռփռայզ Իմփաքթ Ինվեստինգ Ֆանդ էՍ.էՅ, ՍԻՔԱՎ-ՍԻՖ»-ից (The Small Enterprise Impact Investing Fund (SEIIF) S.A., SICAV-SIF), «Միկրո-, Սմոլ էնդ Մեդիում էնթեռփռայզիս Բոնդս էսէյ»-ից (Micro-, Small & Medium Enterprises Bonds SA)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության 6.22.2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ին, ընդ որում մինչև 2017 թվականի հունվարի 1-ը տվյալ դրամային և արտարժութային հիփոթեքային վարկերի նկատմամբ կիրառվում են համապատասխանաբար 100% և 150% ռիսկի կշիռները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մայիսի 2016 թ., N 79-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել վարկային ռիսկի կշիռները՝ համապատասխանեցնելով Կանոնակարգ 2-ում կատարված փոփոխություններին, ինչպես նաև կատարել մի շարք այլ ճշգրտումներ,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 6-րդ կետի 5-րդ պարբերությունում՝
   ա. «7-րդ,» բառից հետո լրացնել «8.1-րդ,» բառերը,
   բ. «17-րդ,» բառից հետո լրացնել «18.1-րդ» բառերը,
   գ. «8-րդ,» բառից հետո լրացնել «8.2-րդ» բառերը,
   դ. «18-րդ,» բառից հետո լրացնել «18.2-րդ,» բառերը,
2) Կանոնակարգ 3-ի 16-րդ կետում բոլոր «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» բառերը փոխարինել «Փոխառուի անվանումը (անունը, ազգանունը)» բառերով,
3) Կանոնակարգ 3-ի Ձև թիվ 3 հաշվետվության 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ էջերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի (կցվում է),
4) Կանոնակարգ 3-ի Ձև թիվ 14 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մայիսի 2016 թ., Ն 80-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մայիսի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.06.2016 թ. (ՀՀԳՏ Ն13 (556), 15.06.2016):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի մայիսի 10-ի թիվ 80-Ն որոշմամբ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը

(շարունակություն)

Վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի																									
Ակտիվներ (որոնց վրա չեն տարածվում ՎՈՋՍ-ները) ըստ ռիսկերի կշիռների																									
Անվա օրերը	Ռիսկի 0 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 10 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 20 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 30 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 35 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 50 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 75 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 100 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 110 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 150 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 200 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 225 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Վարկային ռիսկ((1-2)*0%+(3-4)*10%+(5-6)*20%+(7-8)*30%+(8.1-8.2)*35%+(9-10)*50%+(11-12)*75% +(13-14)*100% +(15-16)*110%+(17-18) *150%+(18.1-18.2)*200%+(19-20)*225%
	1	2	3	4	5	6	7	8	8.1	8.2	9	10	11	12	13	14	15	16	17	18	18.1	18.2	19	20	21
1																									
2																									
3																									
4																									
5																									
6																									
7																									
8																									
9																									
10																									
11																									
12																									
13																									
14																									
15																									
16																									
17																									
18																									
19																									
20																									
…																									
31																									
Միջին																									

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը

(շարունակություն)

(հազար դրամ)

Վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի																	
ՎՌՉՄ ենթակա ակտիվներ (որոնց մեծությունը չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով) ըստ ռիսկերի կշիռների																	
Նմուշ օրերը	ՎՌՉՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը	Ակտիվների հոգուակտ կոտրատների գումար	Ակտիվների մեծությունը, որոնց գծով կիրառ ՎՌՉՄ կիրառման առարկա չդարձնելու փոխհատուցում	ՎՌՉՄ ենթակա ընդհանուր ակտիվների փոխհատուցում	Ռիսկի 0 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 10 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 20 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 30 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 35 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 50 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 75 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 100 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 110 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 150 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 200 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	Ռիսկի 225 % կշիռ ունեցող ակտիվների հոգուակտ կոտրատների գումարը	ՎՌՉՄ ենթակա ակտիվների գծով կարկային ռիսկ (5)*0%+(6)*10%+(7)*20%+(8)*30%+ (8.1)*35%+(9)*50%+(10)*75%+(11)*100%+(12)*110%+ (13)*150%+(13.1)*200%+(14)*225%
	1	2	3	4	5	6	7	8	8.1	9	10	11	12	13	13.1	14	15
1																	
2																	
3																	
4																	
5																	
6																	
7																	
8																	
9																	
10																	
11																	
12																	
13																	
14																	
15																	
16																	
17																	
18																	
19																	
20																	
.....																	
31																	
Միջին																	

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը

(շարունակություն)

(հազար դրամ)

Վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի																	
ՎՌԶՄ ենթակա ակտիվներ (որոնց մեծությունը ճշգրտվում է արժեքի տատանման գործակիցներով) ըստ ռիսկերի կշիռների																	
Նմուշ ա օրերը	ՎՌԶՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ակտիվների մեծությունը, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման պահին փոխվել է	ՎՌԶՄ փոխառյալ ակտիվների ռիսկի փոփոխությունը	Ռիսկի 0 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 10 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 20 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 30 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 35 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 50 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 75 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 100 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 110 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 150 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 200 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	Ռիսկի 225 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ընկալեցնելուց հետո	ՎՌԶՄ ենթակա ակտիվների գծով կարկային ռիսկ (5)*0%+(6)*10%+(7)*20%+(8)*30%+(8.1)*35%+(9)*50%+(10)*75%+(11)*100%+(12)*110%+(13)*150%+(13.1)*200%+(14)*225%
	1	2	3	4	5	6	7	8	8.1	9	10	11	12	13	13.1	14	15
1																	
2																	
3																	
4																	
5																	
6																	
7																	
8																	
9																	
10																	
11																	
12																	
13																	
14																	
15																	
16																	
17																	
18																	
19																	
20																	
.....																	
31																	
Միջին																	

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը

(շարունակություն)

Վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի																				
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (որոնց վրա չեն տարածվում ՎՈՋՄ-ները) վարկային ռիսկի փոխարկման գործոնների վերածման և վարկային ռիսկի հաշվարկները ըստ օրերի																				
Անվա օրերը	Հետհաշվեկշռային պայմանական գործառնություններ (դրամային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ փիրառմամբ հեառ (1-2) * 1 %	Հետհաշվեկշռային պայմանական գործառնություններ (արտարժութային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ փիրառմամբ հեառ (4-5) * 1.5 %	Պայմանագրով սահմանված ժամկետային հետհաշվեկշռային պայմանական գործառնությունների (դրամային եռակի հոդվածներ)) (դրամային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ փիրառմամբ հեառ (7-8) * 20 %	Պայմանագրով սահմանված ժամկետային հետհաշվեկշռային պայմանական գործառնություն-ներ (բացառությամբ եռակի պայմանագրերի (արտարժութային հոդվածներ))	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ փիրառմամբ հեառ (10-11) * 30 %	Պայմանագրով մեկ տարի և ավելի ժամկետայնությամբ հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ (բացառությամբ եռակի պայմանագրերի (եռակի հոդվածներ))	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ փիրառմամբ հեառ (13-14) * 50 %	Պայմանագրով մեկ տարի և ավելի ժամկետայնությամբ հետհաշվեկշռային պայմանական գործառնություններ (բացառությամբ եռակի պայմանագրերի (եռակի հոդվածներ)) (արտարժութային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ փիրառմամբ հեառ (16-17) * 75 %	Եռակի պայմանագրեր/գործառնություններ (դրամային հոդվածներ)	Պահուստ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				
.....																				
31																				
Միջին																				

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը

(շարունակությունը)

(հազար դրամ)

Վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի																	
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (որոնց վրա չեն տարածվում ՎՈՋՄ-ները) վարկային ռիսկի փոխարկման գործոնների վերածման և վարկային ռիսկի հաշվարկները ըստ օրերի																	
Ամսվա օրերը	Վարկային ռիսկի մնծությունը ՎՈՓԳ կիրառումից հետո (19-20) * 100 %	Երաշխավորություններ/երաշխիքներ (արտարժութային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մնծությունը ՎՈՓԳ կիրառումից հետո (22-23) * 100 %	Ռիսկի 0% կշիռ (3+6+9+12+15+18+21+24)-ից	Ռիսկի 10% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24) -ից	Ռիսկի 20% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 30% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 35% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 50% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 75% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 100% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 110% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 150% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 200% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ռիսկի 225% կշիռ (3+6+9+12+15+18+ 21+24)-ից	Ընդամենը վարկային ռիսկ (25)*0%+(26)*10%+(27)*20%+(28)*30%+(28.1)*35%+(29)*50%+(30)*75 %+(31)*100%+(32)*110%+(33)*150%+(33.1)*200%+(34)*225%
	21	22	23	24	25	26	27	28	28.1	29	30	31	32	33	33.1	34	35
1																	
2																	
3																	
4																	
5																	
6																	
7																	
8																	
9																	
10																	
11																	
12																	
13																	
14																	
15																	
16																	
17																	
18																	
19																	
20																	
.....																	
31																	
Միջին																	

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը

(շարունակություն)

Վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի																			
ՎՈՉՀՄ ենթակա հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վարկային ռիսկի փոխարկման գործոնները և վարկային ռիսկի հաշվարկները ըստ օրերի																			
Անցած օրերը	Հետհաշվեկշռային անկանխիկ ժամկետային գործառնություններ (դրամային հոսքեր)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (1-2) * 1 %	Հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնություններ (արտարժութային հոսքեր)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (4-5) * 1.5 %	Պայմանագրով նախատեսված դեպքում ժամկետայնությամբ հետհաշվեկշռային գործառնությունների (բացառությամբ երաշխավորությունների (երաշխիքների)) (դրամային հոսքեր)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (7-8) * 20 %	Պայմանագրով նախատեսված դեպքում ժամկետայնությամբ հետհաշվեկշռային գործառնությունների (բացառությամբ երաշխավորությունների (երաշխիքների)) (արտարժութային հոսքեր)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (10-11) * 30 %	Պայմանագրով նախատեսված դեպքում ժամկետայնությամբ հետհաշվեկշռային գործառնությունների (բացառությամբ երաշխավորությունների (երաշխիքների)) (դրամային հոսքեր)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (13-14) * 50 %	Պայմանագրով նախատեսված դեպքում ժամկետայնությամբ հետհաշվեկշռային գործառնությունների (բացառությամբ երաշխավորությունների (երաշխիքների)) (արտարժութային հոսքեր)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (16-17) * 75 %	Երաշխավորություններ/երաշխիքներ (դրամային հոսքեր)
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1																			
2																			
3																			
4																			
5																			
6																			
7																			
8																			
9																			
10																			
11																			
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			
21																			
22																			
23																			
…																			
31																			
Միջին																			

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը

(շարունակություն)

(հազար դրամ)

Վարկային Ռիսկի հաշվարկն ըստ օրերի																				
ՎՈՋՄ ենթակա հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վարկային ռիսկի փոխարկման գործոնները և վարկային ռիսկի հաշվարկները ըստ օրերի																				
Ամսվա օրերը	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ կիրառումից հետո (19-20) * 100 %	Երաշխավորություններ/երաշխիքներ (արտադրժութային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ կիրառումից հետո (22-23) * 100 %	Հաշվեկշռային վարկային ռիսկի մեծությունը, որի ռիսկի կշիռը ՎՈՋՄ կիրառման արդյունքում փոխվել է	ՎՈՋՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը	Ռիսկի 0% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 10% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 20% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 30% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 35% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 50% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 75% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 100% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 110% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 150% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 200% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ռիսկի 225% կշիռ (3+6+ 9+12+ 15+18+21+24)-ից	Ընդհանուր վարկային ռիսկ (27)*0%+(28)*10%+(29)*20%+(30)*30%+(30.1)*35%+(31)*50%+(32)*75%+(33)*100%+(34)*110%+(35)*150%+(35.1)*200%+(36)*225%
	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	30.1	31	32	33	34	35	35.1	36	37
1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				
21																				
22																				
23																				
…																				
31																				
Միջին																				

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի մայիսի 10-ի թիվ 80-Ն որոշմամբ

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հունվարի 27-ի թիվ 24-Ն որոշմամբ

Ձև 14
(ամսական)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ն3[1] և Ն3[2] նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

Կանոնակարգ 2-ի համաձայն մեկ փոխառուի և խոշոր փոխառուների նկատմամբ ունեցած պահանջները

(հազար դրամ)

Հ/հ	Փոխառուի կատեգորիան (նրա ընդամենը)	Փոխառուի հարկային ռեզիդենտությունը (նրա ընդամենը)	Փոխառուի հարկային ռեզիդենտության երկրի կամ երկրամասի դասակարգումը Ռեզիդենտության մասին օրենքի համաձայն	Փոխառուի կազմակերպաիրավական ձևը	Ընդամենը փոխառուի մասով	Վերջին օրվա դրությամբ ՝ վերջին տարվա ընթացքում չմարված փոխառությունների մնացորդը	Ընդամենը փոխառուի մասով ՝ վերջին տարվա ընթացքում մարված փոխառությունների մնացորդը	Նրա փոխառուների խմբի ընդհանուր պարտավորությունների մնացորդը	Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց ընդհանուր պարտավորությունների մնացորդը	Խոշոր փոխառուների մասով		Ընդամենը (2+3+4+5+6+7+8+9)	Ձեռնարկի կորուստների պահուստ	Ընդամենը ռիսկով չկշռվող հոդվածներ (10-11)	Միջբանկային տարանցիկ, վարկեր, բաժնետոմսերի հաշիվներում օրենքով սահմանված կարգով ձևավորված պահուստներով ծածկագրված վերջնահաշվարկային փոխառությունների մնացորդը		Ձեռնարկի կորուստների պահուստ	Ընդամենը ռիսկով կշռվող հոդված (13+14-15)	Գումարը ռացիոնալացման ենթակա ռիսկի կշռով (16 ստորև)	Գումարը (12+17)	Ն3[2] նորմատիվի հաշվարկման մեջ ընդգրկվող մեծությունը (18 - 8+հնգապակոր կորուստների պահուստ 8-րդ սյունակում նշված մեծությունների գծով))
										Խոշոր փոխառուների մասով	Այլ մնացորդը (ոչ խոշոր փոխառուների հետ տված փոխառությունների մնացորդը չէ) որոշ ոչ պակաս 10 տոկոսի չափով կազմող փոխառուների մասով											
	1	*1.1*	*1.2*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*	*19*
Ընդամենը																					
1																					
2																					
3																					
4																					
5																					
6																					
7																					
8																					
9																					
10																					

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև 14
(ամսական)

Ն3[1] և Ն3[2] նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

Մեկ փոխառուի և խոշոր փոխառուների հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ունեցած պահանջները և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները

(հազար դրամ)

Հ/հ	Փոխառուի անվանումը (անունը, ազգանունը)	Փոխառուի հարկային վճարողի հաշվառման համարը (հիմնարկի կամ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը, անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի նույնականացման համարը (ԱՀՎՀՀ))	Տվյալ կետի համար կիրառելի ռիսկի գործակիցը (ռիսկի աստիճանը)	Տվյալ կետի համար կիրառելի ռիսկի գործակցով (աստիճանով) ընդգրկված պահանջների և պարտավորությունների ընդհանուր գումարը	Տվյալ կետի համար կիրառելի ռիսկի գործակցով (աստիճանով) ընդգրկված պահանջների և պարտավորությունների ընդհանուր գումարից՝ ապահովված անշարժ գույքի գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Տվյալ կետի համար կիրառելի ռիսկի գործակցով (աստիճանով) ընդգրկված պահանջների և պարտավորությունների ընդհանուր գումարից՝ ապահովված անշարժ գույքի գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված բնակելի անշարժ գույքի գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը (տող 3.1 + տող 3.2)	Ընդամենը գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված անշարժ գույքի գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված բնակելի անշարժ գույքի գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված ոչ անշարժ գույքի գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված այլ գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված երաշխիքով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված ֆինանսական միջոցների գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված ոչ ֆինանսական միջոցների գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված այլ գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված անձնական երաշխավորությամբ ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված այլ երաշխիքով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված չապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված ոչ ֆինանսական միջոցների գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված այլ գրավով ապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Ընդամենը պահանջների և պարտավորությունների գումարից՝ ապահովված չապահովագրված պահանջների և պարտավորությունների գումարը	Գումարը (12+16)
	1	*1.1*	*2*	*2.1*	*2.2*	*3*	*3.1*	*3.2*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*
Ընդամենը																						
1																						
2																						
3																						
4																						
5																						
6																						
7																						
8																						
9																						
10																						
11																						
12																						
13																						
14																						
15																						
16																						
17																						
18																						
19																						
20																						
21																						

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

Ձև 14
(ամսական)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ն3[1] և Ն3[2] նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

(հազար դրամ)

Հ/հ	Փոխառուի (պարտապանի) անվանումը	Փոխառուի հոգմիավորման ծածկագիրը (պարտապանի կոդը)	Փոխառուի հոգմիավորման ենթաբաժնի (ենթակատեգորիայի) անվանումը	Փոխառուի հոգմիավորման ենթաբաժնի (ենթակատեգորիայի) համար սահմանված գործակիցը	Ակտիվների անվանումը	Երաշխիքի տրամադրման ամսաթիվը	Ակտիվների տեսակը	Ակտիվների ընդհանուր գումարը	Հաշվի առնվող ակտիվների գումարը		Ոչ հաշվի առնվող ակտիվների գումարը		Ընդամենը (3+4+5+6+7+8+9+10)	Հեռավոր կորուստների պահուստ	Ընդամենը ռիսկով չհաշվառվող հոդվածներ (11-12)	Միջնաժամկետ և ստանդարտ վարկեր, ինչպես նաև կենտրոնացման բաժնետոմսերի և կենտրոնացման բաժնեվկերի մեծամասնության փոխառուի հետ կապված ակտիվներ		Հեռավոր պահուստ	Ընդամենը ռիսկով կշռված հոդված (14+15-16)	Գումարը հաշվառվող ռիսկի կշռով (17 տոկոսի)	Գումարը (13+18)	Ն3[2] նորմատիվի հաշվարկի մեջ ընդգրկվող մեծությունը (19-9+հնգամսյա կոորտատների պահուստ 9-ին մոտվող շրջած մեծությունների գծով)	Հարաբերակցությունը տոկոսներով	Հարաբերակցության նորմատիվ տոկոսներով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև 14
(ամսական)

Ն3[1] և Ն3[2] ձևաթղթերի հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ

(շարունակություն)

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

(հազար դրամ)

Հ/Հ	Փոխառու կամ երաշխավորված կազմակերպության (անձի) անվանումը	Փոխառու կամ երաշխավորված կազմակերպության (անձի) հաշվառման հարկային մարմնի կողմից տրված հաշվառման համարը	Տվյալ փոխառության կամ երաշխավորության գծով գումարները (գումարները), որոնք ներառված են հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ	Տվյալ փոխառության կամ երաշխավորության գծով գումարները (գումարները), որոնք ներառված են հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ	Տվյալ փոխառության կամ երաշխավորության գծով գումարները (գումարները), որոնք ներառված են հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ	Սկզբնական գումարը (գումարները), որի (որոնց) չափով տրամադրվել է փոխառությունը կամ երաշխավորությունը	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված տոկոսների գումարը (գումարները)	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված տուգանքների գումարը (գումարները)	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված այլ գումարները	Արտարժույթով տրամադրված փոխառության կամ երաշխավորության դեպքում՝ փոխարժեքը	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված՝ փոխառության կամ երաշխավորության գծով մայր գումարի մարման ենթակա գումարները (գումարները)	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված՝ փոխառության կամ երաշխավորության գծով տոկոսների գումարները (գումարները)	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված՝ փոխառության կամ երաշխավորության գծով տուգանքների գումարները (գումարները)	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված՝ փոխառության կամ երաշխավորության գծով այլ գումարները (գումարները)	Ընդամենը (5+6+7+8+9+10)	Հաշվետու ամսվա համար հաշվարկված ընդհանուր գումարի մեջ ներառված՝ փոխառության կամ երաշխավորության գծով մայր գումարի մարման ենթակա գումարները (գումարները) (11-12)	Ընդամենը ռիսկով չկշռված հոդվածներ (11-12)	Միջբանկային ավանդներ, վարկեր, դեպոզիտային հաշիվներ, օստատիկային միջոցներ և դրանց գծով ստացված տոկոսներ	Էշելոնային կոտրատների պահուստ	Ընդամենը ռիսկով կշռված հոդվածներ (14-15)	Գումարը հավելյալ սեփական կշռով	Գումարը (13+17)	Հավելյալ սեփական միջոցների հարաբերակցություն	Հավելյալ սեփական միջոցների հարաբերակցության նվազագույն թույլատրելի չափաքանակ
	1	*2*	*3*	*3.1*	*3.2*	*4*	*4.1*	*4.2*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*	*19*	*20*
Ընդամենը																								
1																								
2																								
3																								
4																								
5																								
6																								
7																								
8																								
9																								
10																								
11																								
12																								
13																								

Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին[*]

Նպատակ ունենալով ձևավորված խնայողությունների միջոցով ապահովել ԱՊՊԱ ոլորտի ենթակառուցվածքների զարգացումը՝ միևնույն ժամանակ չվտանգելով Երաշխավորման ֆոնդի առջև դրված խնդիրների պատշաճ իրականացումը և Երաշխավորման ֆոնդի ֆինանսական կայունությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 2016 թվականի մայիսի 2-ի թիվ 13Լ որոշմամբ ներկայացված առաջարկությունը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Դադարեցնել Երաշխավորման ֆոնդին կատարվող 2016 թվականի երկրորդ, երրորդ, չորրորդ եռամսյակների և 2017 թվականի առաջին եռամսյակի վճարների իրականացումը՝ դադարեցումից հետո առաջին վճարումը կատարելով 2017 թվականի 2-րդ եռամսյակին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մայիսի 2016 թ., N 81-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մայիսի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.06.2016 թ. (ՀՀԳՏ N13 (556), 15.06.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հուլիսի 13-ի թիվ 175-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հուլիսի 13-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 21-ը հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 21-ի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Վարկային կազմակերպության դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման ժամանակ գանձապահը դրամանիշերի վճարունակությունը ստուգելիս պետք է ղեկավարվի սույն գլխով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի կանոն 3-ով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 մայիսի 2016 թ., N 84-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մայիսի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 9.06.2016 թ. (ՀՀԳՏ N13 (556), 15.06.2016):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆԻՍ 2016)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
